№ 76 ԿԻՐԱԿԻ 7 ԱՊՐԻԼԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 7 ԱՊՐԻԼԻ № 76

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակը»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ապրիլ 2-ին յանկարծակի վախճանվեց

ՍՕՖԻԱ ՄԻՐՕՆՕՎՆԱ
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԸ,

որի մասին տեղեկացնում են հանգուցեալի զաւակները։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, ապրիլի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից (Լերմոնտովսկայա № 10) դէպի Վանքի մայր-տաճարը [illegible] բակում, հանգուցեալ Գ. Սունդուկեանցի դամբարանի կողքին։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու, որ ապրիլի 7-ին, ս. Նշան եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ԱՒԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆԻ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ։

(կ.) 245. 2—2

Կովկասի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ ապրիլի 7-ին և 8-ին տեղի կունենայ տարեկան սովորական

ՎԱՃԱՌՔ

Ընկերութեան արհեստանոցում պատրաստած ձեռագործների, այն է՝ կանանց բլուզների և շրջազգեստների, մանկական զգեստների և սեղանատան զարդարուն սփռոցների, նաև մանկական գլխարկների, գուլպաների, գործված զգեստների և այլն։

ՎԱՃԱՌՔԸ կը տևէ առաւ. ժամը 10—3-ը ցեր.

Պասկեվիչի փողոց, № 13.

առ. 268. 2—2

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՋՈՒԼՖԱՅՈՒՄ

Ա. Օ. ԵՍԱՅԵԱՆՑԸ ՆԵՐԿԱՅ ԱՊՐԻԼԻ ՍԿԶԲԻՑ ԲԱՑԵԼ Է ՊԱՀԵՍՏ ԲԱՑԱՌԱՊԷՍ

Ա/Տ. Ն. Ի. Բօզարջեանց եւ Որդիք

ծխախոտային ֆաբրիկայի արդիւնաբերութեան համար՝ գլխաւորաբար յարմարութիւն տալու իր բազմաթիւ կլիէնտներին, առանձնապէս մանրավաճառներին, խուսափել այդ ֆաբրիկայի անունով կեղծված ապրանքները գնելուց։ Գնորդներին խնդրվում է դիմել Եսայեանցի լիազօր-ներկայացուցիչ ՋՀԱՆԳԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ—ՋՈՒԼՖԱՅՈՒՄ։

ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱ Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ եւ Ա. ՍԻՒՏՃԵԱՆ

Պատրաստում է կլիշէներ արտասահմանի նորագոյն միջոցներով-ցինկի, պղնձի, գալվանօ եւ էմալի. առանձին ուշադրութիւն է դարձնում էմալի կլիշէների վրայ, որոնք ուշ են փչանում եւ պահպանում են բնագրի բոլոր նրբութիւնները.

Հասցէն՝ Тифлисъ. Пушкинскій пассажъ, Т-во С. СОГОМОНЯНЪ и А. СЮТЧЬЯНЪ.

(Ե.) 272. 2—1

Հայոց Դրամատիկական Ընկերութեան Վարչութեան կողմից

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ

1) Տարեկան անդամավճարը 3 ռուբլի է (ընդունվում է Ընկերութեան գրասենեակում, որ բաց է առաւօտեան ժամը 11-ից մինչև ժամը 12-ը, իսկ երեկոները՝ ժամը 6-ից մինչև 7-ը բացի կիրակի օրերից, улица Паскевича № 1)։

2) Կովկասի բոլոր վայրերում Ընկերութիւնը իրաւունք ունի բանալ ճիւղեր։ Եթէ որոշ վայրում կան առնուազն 15 հոգի, (առանց սեռի խտրութեան) որոնք ցանկանում են անդամագրվել Ընկերութեան, նրանք պէտք է դիմեն Ընկերութեան վարչութեանը վերոյիշեալ հասցէով, որպէս զի վարչութիւնը այդ վայրում ճիւղ բանալու հարցը առաջարկի Ընկերութեան առաջիկայ ընդհանուր ժողովի քննութեան։

(կ.) առ. 261. 2—2

ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ ՄԱՔԱՌՈՂ ԿՈՎ. Կ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ապրիլի 6-ից մինչև 21-ը Արտիստական Ընկ. համերգային դահլիճում

Հակաթոքախտային ցուցահանդէս դ-ր Բլիւմենտալի

Ցուցահանդէսը կը բացվի շաբաթ, ցերեկվայ ժամը 2-ին, իսկ նրանից յետոյ բաց կը լինի ամեն օր առաւ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։ Մուտքի վճարն է 20 կոպ., աշակերտներից և զինուորներից—10 կոպ., խմբովին այցելելիս՝ 5-ական կոպ. իւրաքանչիւրից։

(ա.օ.) առ. 264. 3—3

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռուիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ծնրբնրի, նոյն պէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանանց, ծնրբնր և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբօտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզօրով, Վ. Ա. Ջակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ումիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց։ Կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբօտին։

(Ե.կ.) առ. 779. 100—44

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բեռլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պօզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.

(կ.) առ. 830. 0—17

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։

Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9--1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։

Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։

Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 92. 100—46

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան

ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս Թոքերի։

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Ռուիշչեվսկայա 10 (Լերմօնտովսկ. դէղատան դիմացը)։

(Ե. Հ. Կ.) առ. 746. 100—76

ԻՆՉ ԵԼՔ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ Պարիզում պէտք է կազմվի մի միջազգային խորհրդակցութիւն՝ քննելու Թիւրքիայի պարտքերի հատուցման խնդիրը։

Դա Թիւրքիայի ֆինանսական բաժանման սպառնական գործողութեան սկզբնաւորութիւնն է։

Դա Թիւրքիայի բաժանման ծրագիրն է ֆինանսական տեսակէտով։

Խորհրդակցութեանը կը մասնակցեն նաև բալկանեան պետութիւնները, որոնք ունեն նոյնպէս ֆինանսական պահանջներ Թիւրքիայից։

Սկզբում յայտարարված էր, որ Պարիզի խորհրդակցութեան մէջ պէտք է շօշափվեն միայն ֆինանսական խնդիրներ և որոշումները պէտք է կրեն զուտ ֆինանսական կարգադրութիւնների բնաւորութիւն։

Բայց խնդրի խոր քննութիւնը ցոյց տուեց, որ անհնարին կը լինի խուսափել քաղաքական տեսակէտներից, որովհետև ֆինանսական կարգադրութիւնների և ծրագիրների գործնական իրականացման համար կարող են հարկաւոր գալ և քաղաքական ապահովութիւններ ու հեղինակութիւններ։ Ուստի արամադրութիւն է յայտնվում շօշափել նաև քաղաքական խնդիրներ այն չափով, որպիսին անհրաժեշտ է ֆինանսական որոշումների իրագործութեան համար։

Եւրոպական պետութիւնները առերես չեն մասնակցում, իբրև քաղաքական մարմիններ, այլ իբրև փոխատուութիւն տուած պարտատէրեր։ Բայց դա միայն արտաքին առերևոյթ հանգամանք է։ Իրապէս նրանք կը մասնակցեն, իբրև միջազգային գործերի կարգադրողներ։

Պարիզ գնացող պատգամաւորների պայմանախօսութեան մէջ դրված է «Թիւրքիայի անձեռնմխելիութեան» բա[illegible]

Այո, Թիւրքիան պէտք է լինի անձեռնմխելի և պէտք է պահպանի իր գոյութիւնը։ Ոչ ոք իրաւունք չունի նրա քաղաքական ինքնօրինութեան դիպչել։

Բայց կարելի է երաշխաւորութիւնների հարց դնել պարտքերի հատուցման համար։ Դա նոյնիսկ անհրաժեշտութեան թելադրութիւն է։

Այդպիսի օրինակներ էլ կան մեր առաջ։

Եգիպտոսը քաղաքական ինքնօրինութիւն ունի։ Նրա խըդիվը երկրի տէրն է։

Իսկ Պարսկաստանը. միթէ նա ինքնուրոյն պետութիւն չէ։

Նոյնպէս նորաստեղծ Ալբանիան, Մօնղօլիան, Տիբէթը.

Դրանք ինքնավար երկիրներ են։ Եւ միևնոյն ժամանակ որոշ ազդեցութեան և հովանաւորութեան տակ։

Արդեօք ֆինանսական խնդիրների էութիւնը այնպիսի՞ ստիճանի է հարցրել իրերի վիճակը, որ Թիւրքիան եւ պէտք է յիշված երկիրների բաղդին ենթարկվի թէ՞ նա դեռ միջոցներ ունի աւելի անկախ իրան զգալու. դա ցոյց կը տայ մերձակայ ապագան. բայց անցեալի փաստերը գալիս են համոզելու, որ հեռու չէ այն օրը, երբ Թիւրքիան պէտք է ընդունի եւրոպական պետութիւնների ազդեցութեան շրջաններ իր պետութեան մէջ։ Եւ միթէ ներկայումս նրա ֆինանսական գործերի մի մասը արդէն չէ մտել եւրոպական ձեռնհասութեան սահմանների մէջ, ինչպէս օրինակ ծխախոտի մենավաճառութեան, օսմանեան բանկի ղեկավարութեան գործերում։

Իրերի տրամաբանութիւնը իր թելադրութիւններն ունի։

Եւ մենք գտնվում ենք նոր դրութեան նախօրեակում, մի դրութիւն, որը պարունակում է իր մէջ սաղմեր աւելի բարդ երևոյթներ արտաբերելու ժամանակակից սերունդի համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 ապրիլ

Պետերբուրգ.— Պետական Դումա։ Քուէարկութեամբ ընդունվեց աջակողմեանների հետևեալ բանաձևը. «Մինչև վերջ լսելով առևտրի մինիստրի բացատրութիւնները, ընդունելով այդպիսիները անբաւարար և ցաւ յայտնելով, որ կառավարութիւնը մինչև օրս պատշաճ միջոցներ ձեռք չէ առել վառելանիւթի գները իջեցնելու համար, Դուման անհրաժեշտ է գտնում. 1) քննել նաւթային սինդիկատի, ինչպէս նաև սինդիկատի հետ առնչութիւն ունեցող անձանց և հաստատութիւնների գործունէութիւնը դատարանով. 2) ընդարձակել մշակելու թոյլատրված նաւթաբեր արքունի հողաբաժինները. 3) հետախուզումների ենթարկել արքունի նաւթաբեր հողաբաժինը, նաև արքունի հասոյթն ու նաւթի վերամշակումը. 4) թոյլ տալ ստանալ արտասահմանեան նաւթը ու կէրօսինը անմաքս և 5) դադարեցնել նաւթի ու կէրօսինի արտահանութեան համար սահմանված պարգևները անդրկովկասեան երկաթուղիների վրա։

—

Պետերբուրգ.—Համաձայն քաղաքապետի տեղեկութիւնների, երէկ գործադուլ էին անում 55,000 բանւոր։ Պետերբուրգսկայա-Ստորոնայում տեսնելով որ ամբոխը մտադիր է ազատել այն բանւորին, որի ձեռքից խլվեց կարմիր դրօշակը և որ ձերբակալվեց, ոստիկանութիւնը ստիպված եղաւ սարճանակ ուղղել ամբոխի վրա, որով և հարկադրեց նրան ցրվել։ Անկարգութիւնների ժամանակ կալանաւորվեցին 36 մարդ։ Ժամը 2-ի մօտերը մայրաքաղաքում վերականգնվեց կարգ ու կանոնը։

—

Կիէվ.—Լէնայի դէպքերի տարեդարձին գործադուլ էին անում մօտ 3000 բանւոր։ Գործադուլը ընթացաւ խաղաղ։

—

Վիէննա.—Զինուորական բիւջէի քննութեան ժամանակ սոցիալիստ Լիբկնէխտ յայտնեց, որ Կրուպպի ֆիրման [illegible] պէտք թեքէ զինուորական մինիստրութեան բարձրաստիճան և միջին պաշտօնեաներին՝ յայտնելու զինուորական գաղտնիքներ։ Զինուորական մինիստրը պատասխանելով ճշտեց Լիբկնէխտի յայտնածը։

—

Լօնդօն.— Երէկ վերադարձաւ Ուէլսի պրինցը։

—

Բուխարէստ.—Պատգամաւորների պալատի նիստի բացման ժամանակ մի անյայտ մարդ կրակեց, բացականչելով. «Հարկաւոր է, որպէս զի մակեդոնացու ձայնը վերջապէս լսվի»։ Դահլիճը յայտնեց, որ նիստը շարունակվում է, որով առաջ բերեց բուռն ծափահարութիւն։ Անյայտ մարդու մօտ գտնվեց խնդրագիր. նա յանձնվեց դատական իշխանութիւններին։

Ֆինանսների մինիստրը օրինագիծ ներկայացրեց 50 միլիօն ֆրանկ յատկացնելու՝ շինական դպրոցներ կառուցանելու համար։

—

Բրիւսէլ.—Տպարանական բանւորները վճռեցին գործադուլ անել։ Վաղը լրագիրների մեծ մասը լոյս չէ տեսնելու։

—

Հռոմ.—Պարիզի ֆինանսական վեհաժողովում իտալական պատգամաւորներ նշանակվեցին արտաքին գործերի մինիստրութեան ընդհանուր գործերի դեպարտամենտի կառավարիչ Կօնը, իտալական բանկի ճիւղի տնօրէն Կանօվանին և պետական գանձատան վերատեսուչ Ռօսսինին։

—

Կ. Պօլիս.—«Մ. և Ա.» կօմիտէտը մտադիր է հեռացնել պետական ծառայութիւնից բաւական թւով ալբան պաշտօնեաներին։

Պնդում են, որ իտալական դեսպանը, համաձայն ստացած հրահանգների, քայլեր արեց Բ. Դրան առաջ՝ Ջավիդ-փաշայի ղեկավարութեամբ թիւրք զօրամաս Վալօն ուղարկելու առթիւ։

Գաղթականների հարցով զբաղվող յանձնաժողովը հրատարակեց մի բրօշիւր, որի մէջ ասված է, թէ իբր բուլգարները խստութիւններ են թոյլ տալիս Մակէդօնիայում և քամիլի բարբարոսութիւնների դիմում։ Բրօշիւրը վաճառվում է Ստամբուլի գրախանութներում և գրգռում է մահմեդական խուժանի ֆանատիկոսութիւնը։

—

Սիմլա.—Վազիրիստանի հիւսիսում ընդհարում տեղի ունեցաւ 1000 տեղացիների հետ, որոնց առաջնորդում էին անգլիացիների դէմ թշնամաբար տրամադրված մօլլաներ։ Երկու տեղացի սպանվեցին։ Հնդկաստանի հիւսիսարևմտեան զօրքերի կազմը ուժեղացված է, որովհետև երկիւղ կայ ընդհանուր ապստամբութեան այդ շրջանում։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 ապրիլի

Կ. Պոլիս.—Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Չաթալջայում պատերազմական գործողութիւնները դադարեցվեցին բերանացի համաձայնութեան հիման վրա հետեւեալ պայմաններով. պատերազմական գործողութիւնները դադարում են Չաթալջայում և Բուլաիրում մինչև ապրիլի 10-ը. եթէ այդ ժամանակամիջոցում հաշտութիւն չը կնքվի, զինադադարի ժամանակը կարելի է երկարել. երկու կողմերի ներկայացուցիչների մասնաժողովը կորոշէ չէզոք սահմանակէտը. պատերազմական գործողութիւնները վերսկսելու դէպքում երկու կողմերը նախազգուշացվում են 48 ժամ առաջ. զինադադարի ժամանակ օսմանեան նաւատորմը չը պէտք է արգելէ մըթերքներ փոխադրել բուլգարական զօրքի համար Սարոսի ծոցի և Սև ծովի ափի միջև։

Լոնդոն.—Բէյթէրի գործակալութիւնը տեղեկացաւ, որ դեսպանների խորհըրդակցութիւնը քննեց Չերնոգորիային ֆինանսական վարձատրութիւն տալու եղանակների հարցը։ Վճիռը տակաւին յայտնի չէ։ Զինադադարի խնդիրը վերջնականապէս պարզված չէ։ Զինադադարը Թիւրքերը պատճառաբանում են սպանվածներին Թաղելու անհրաժեշտութեամբ։ Թէև համաձայնութիւն կայացել է միայն Թիւրքիայի և Բուլգարիայի միջև, այնու ամենայնիւ այն կարծիքն է տիրում, թէ համաձայնու[illegible]պելու նախերգանքն է։

Բելգրադ.—Մեծ պետութիւնների ներկայացուցիչները տեղեկացրին կառավարութեանը, որ Լոնդոնի դեսպանաժողովը որոշել է Ալբանիայի հիւսիսային և հիւսիս-արևելեան սահմանները։

Սօֆիա.—«Միրը» հաղորդում է, որ մեծ պետութիւնների նոտային պատասխանելը ուշացաւ Պաշիչի բացակայութեան պատճառով, որ այժմ արդէն վերադարձել է Ուսկիւբից։ Կառավարութեան պատասխանը սպասվում է այսօր։ Յունաստանը արդէն պետութիւնների առաջարկութեանը։ Պատերազմական գործողութիւնները չեն վերսկսվել։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ)

Կ. Պոլիս, 28 մարտ

— Հաշտութիւն պիտի ըլլա՞յ...
— Հաշտութիւնը մօտ է եղեր...
— Այս շաբթու հաշտութիւն պիտի ըլլայ...
— Ե՞րբ պիտի ըլլայ հաշտութիւն...
— Այլևս կը բաւէ. հաշտութեան նայինք...
— Հաշտութիւնն ինչո՞ւ կուշանայ...
Եւ այլն, այլն, և այլն։

Կ. Պոլսոյ ամեն Թաղերու և փողոցներուն մէջ այս հարցումներն են, որ իրարու կընեն, երկու մարդ որ իրարու կը հանդիպին։

Ատիկա ջղագրգիռ վիճակի մը և մտայնութեան մը պատկերն է, որ ուրիշ կերպով չի կրնար մեկնուիլ, եթէ ոչ այն յուսահատութեամբ, որ կը տիրապետէ Կ. Պոլսոյ բնակչութեան մեծամասնութեան վրայ։

Թշուառութեան ծայրագոյն աստիճանին վրայ կը գտնուինք ամենս ալ։

Օսմ. կառավարութիւնը, որ շատոնց դադրած է կառավարութիւն ըլլալէ, ժողովուրդին հոգածու պաշտպանը հանդիսանալու տեղ՝ անոր կեղեքիչն ու կողոպտիչը դարձած է։

Տուրքերը՝ անհամեմատ ծանրացուցած են։ Եւ շատ տեղ այնպիսի ձև մը տուած են, որ կալուածները ամբողջ տարեկան վարձքը տալով իսկ կարելի չէ ազատել։ Եւ երևակայեցէք, թէ Թիւրքիոյ մէջ բազմաթիւ այրիներ ու որբեր կան, որոնք միայն կալուածքի մը հասոյթով պարտաւորուած են ապրիլ և ապրեցնել իրենց շուրջինները։ Այս կերպով անոնք պիտի դատապարտուին մէկ տարի մատնուիլ Թշուառութեան և աղքատութեան։

Ասկէ զատ՝ Կ. Պոլսոյ մէջ կեանքը տարապայման սղած է, ինչ որ անտեսական անձկութիւնը անգամ մը ևս կը շեշտէ։

Այս տագնապալի վիճակին դարման մը տանելու բնաւ հոգածու չէ կառավարութիւնը, որ միայն «տուէք» կըսէ։

Այս պայմաններուն մէջ, հարկաւ, հաշտութեան անհամբեր սպասուիլը շատ բնական է, վասնզի շատեր կը կարծեն, թէ հաշտութենէն յետոյ գէթ կեանքը պիտի աժաննայ և թէ Եւրոպայէն նոր փոխառութիւններով Թիւրքիոյ մէջ դրամի առատ[illegible] պիտի օգտուէին երկրին բնակիչները։

Սակայն դժբաղդաբար այս փափագը չի իրագործուիր, և հաշտութիւնը միշտ կը յապաղի, ու անձկութիւնը կայ ու կը մնայ մեր գլխուն վրայ իր ճիրաններուն մէջ մեզի տանջելով ու հարուածելով։

Այս անորոշութիւնը հիմա միակ մտատանջութիւնն է պաշտօնական և անպաշտօն Թիւրքիոյ։

Հաշտութիւն պիտի ըլլա՞յ։

Ոչ ոք, դժբաղդաբար, հաստատական պատասխան կրնայ տալ։

Բալկանեան պետութիւններու խորհրդաւոր վերապահումները՝ Թիւրքերու անպայման համակերպութեան դէմ, և Շկոտրայի փշոտ խնդիրը, որ Թիւրքական ըմբոստութիւնն է ընդդէմ բալկանեան պետութեանց անյողդողդ կամքին, իրար կը խաչաձևեն և անորոշութիւնն ու տարտամութիւնը կը նուիրագործեն։

Կ. Պոլսոյ մէջ այս անձուկը նշմարելի է ամենուն դէմքին վրայ։

Տնտեսական փճացումը այսօր կատարուած իրողութիւն մըն է, և Թշուառութիւնը՝ իբր անարգ ուրուական մը՝ իր ժանիքները ցոյց կուտայ Կ. Պոլսոյ գեղատեսիլ մթնոլորտին վրայ, իր բովանդակ դժոխատեսիլ երևոյթովը։

Կ. Պոլիս, որ մինչև հիմա գաղութներ ընդունած էր, ուր կը դիմէին ամէն գաւառէն անոնք, որ իրենց մէջ նախաձեռնութեան ոգի կը զգային, հիմա կը կարծեմ թէ ինքն ալ իր կարգին գաղութներ պիտի տայ, և շատեր պիտի պարտաւորուին գաղթել այլուր ապրելու համար։

Այս անտեսական անկման հետևանքները կրելու պարտաւորուած՝ են, առաւելապէս, դարձեալ քրիստոնեայ տարրերը, քանի որ առևտրական և անտեսական շարժումը բոլորովին անոնց ձեռքերուն մէջ կը գտնուի։

Իսկ մահմեդականներու մէջ անտեսական անհագին յեղաշրջում մը առաջ բերաւ պետական անանկ վիճակը և աւխականներու անվճար մնալը։

Բոլոր Թիւրքերը կապրին պետութեան կռնակէն և ամսականով։ Երբ այդ կը դադրի վճարուիլ, անկումը սոսկալի կըլլայ։ Մանաւանդ որ Թիւրքերու մէջ քանի մը փարա խնայողութիւն ունեցող պաշտօնեայ գտնել գրեթէ կարելի չէ։ Աւելի պարտք ունին, քան խնայողութիւն։ Հետևաբար անոնց համար ամսականին դադրելը սոսկա[illegible] մըն է։

Նոյնպէս տաժանելի է վիճակը Ռումելիի մէջ պաշտօնավարող պաշտօնեաներուն, որոնք առնուազն 8—10,000 անձ են և կը մնան անպաշտօն և գուցէ անընդունակ՝ ուրիշ գործ մը ընելու։

Ասոնց ալ վիճակը սահմանուած է շատ խեղճ ըլլալու։ Ասոնք ալ հաշտութեան կը սպասեն... որ սակայն կուշանայ։

Հայորդի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 ապրիլի

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է մարտի 31-ին՝ Երզնկայում հայ Սարգիս Ղազանջեանի տանը տեղի ունեցած պայթումի մասին, որից քանդվեց Ղազանջեանի և հարևան մի քանի տները։ Փլատակների տակից հանվեցին Սարգսի և ուրիշ երկու հայի դիակները, մի ռումբ, 10 գնդակ, փամփուշտներ ու պայթուցիկ նիւթեր։ Այլ հայերի մօտ կատարված խուզարկութեան ժամանակ գտնվեցին հրացաններ ու ռումբեր։ Թէև, ըստ պաշտօնական հաղորդագրութեան, կարգ ու կանոնը քաղաքում չը խանգարվեց, սակայն հայոց պատրիարքարանի ստացած տեղեկութիւնների համաձայն մեծ շարժում գոյութիւն ունի Երզնկայում, յուզմունքներ են սկսվում Բիթլիսում և Հաճընում։ Թիւրքաց կառավարութիւնը հայկական վիլայէթները ուղարկում է ռումելիական ժանդարմերիան՝ ազգաբնակութեան ապահովութեան համար։

—

Աւստրիական աղբիւրները նոյնպէս ճշդում են, որ Ռուսաստանը յարուցանելու է հայկական հարցը և պահանջելու է գործադրել Բեռլինի դաշնագիրը բարենորոգումների վերաբերեալ։ Ռուսաստանը Թոյլ չի տայ, որ կրկնվի մակեդոնական պատմութիւնը, և պահանջում է մեծ պետութիւններից մանդատ տալ իրան։

ՀԱՅԵՐԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

Այս վերնագրով մի մեծ Թղթակցութիւն է տպված «Нов. Вр.» Թերթի ապրիլի 2-ի համարում, գրված Կ. Պոլսից Մաշկով ստորագրութեամբ։

Թողնելով յաջորդ անգամին տալ այդ Թղթակցութեան ամբողջ Թարգմանութիւնը, մենք այսօր առաջ կը բերենք նրա համառօտ բովանդակութիւնը։

Մաշկովը պատմում է իր ունեցած խօսակցութիւնը «հայ քաղաքական գործիչների ամենագլխաւորներից մէկի» հետ, որ պարզել է ռուս Թղթակցին «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութեան հայեացքը և գործելակերպը հայոց հարցի մասին։

Այդ «ամենագլխաւոր գործիչը» յայտնել է, որ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը օսմ. սահմանադրութեան հռչակման օրից միշտ աշխատել է լիակատար համաձայնութեամբ «Միութիւն և Առաջադիմութիւն» (երիտասարդ-Թիւրքերի) կուսակցութեան հետ, և չը նայելով որ այդ կուսակցութիւնը երկու անգամ կազմակերպեց հայերի ջարդեր Ադանայում, այնու ամենայնիւ «Դաշնակցութիւնը» անկեղծօրէն պաշտպանում էր նրան այն մտքի յոյսով, որ նրանք վերջ ի վերջոյ կը բարւոքեն բազմաչարչար հայ ժողովրդի վիճակը։ Սակայն համոզվելով, որ ոչ ունիոնիստների (երիտ.-Թիւրքերի) կուսակցութիւնը, ոչ պահպանողական (Քեամիլ-փաշայի) կուսակցութիւնը և ոչ առհասարակ որևէ մի Թիւրքական ռէժիմ բնաւ չեն ձեռնարկելու այդ նպատակին, հայ հայրենասէրները եկել են այն եզրակացութեան, որ հայոց հարցը լուծելու 4 եղանակ կայ։

Առաջին և ամենապարզ եղանակն է միացնել Ռուսաստանի հետ բոլոր հայաբնակ երկիրները, բացառապէս մինչև Մերսինը և Ալէքսանդրէտը։

Երկրորդ լուծումը՝ մտցնել Հայաստանի մէջ նոյն ռէժիմը, որը Աւստրիան ձգտում է հաստատել Ալբանիայում, այն է՝ հրատարակել աւտոնոմ Հայաստան Ռուսաստանի անմիջական հովանաւորութեան ներքոյ։

Երրորդ՝ եթէ այս կամ այն նկատումներով Ռուսաստանը անտարբերութեամբ վերաբերվի հայերի վիճակին, այդ դէպքում պէտք է դիմել Գերմանիային և, համաձայն նրա նպատակների, կազմակերպել ինքնավար Հայաստան Գերմանիայի հովանաւորութեան ներքոյ։

Վերջապէս չորրորդ եղանակն է՝ գործադրել Հայաստանում այն ռէժիմը, որ գործադրվում է անցեալ դարի 60-ական Թւականներից Լիբանանում—աւտոնոմիա բոլոր մեծ պետութիւնների երաշխաւորութեան ներքոյ։

«Սակայն,—կրկնել է Դաշնակցութեան ներկայացուցիչը,—հայերի ահագին մեծամասնութիւնը կողմնակից է առաջին երկու եղանակին և մեծ յոյսով նայում է միշտ մեծահոգի մեծ Ռուսաստանի վրա»...

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 15 մարտ

«Տառապանքներու ժամերը երկար կըլլան» ըսած է ժողովրդական առածը։

Երկինք խստացած, երկիրը սառնացած, ծով ու ցամաք սառոյց կտրած, ժողովուրդը մերկ ու քաղցած՝ չի կրնար նոյն իսկ մտածել թէ որու դիմէ։ Որու դիմէ, երբ ամեն դռներ—մարդկային ու աստուածային—գոց են այս տարաբաղդ ու անտէր ժողովրդին առաջ։

Ճիշդ 8 օր առաջ էր, որ այս տողերով կը գրէինք տեղւոյս տարօրինակ ձմեռուան խստութիւնը. աւելորդ չըլլար եթէ ըսենք, որ ձմեռային սառոյցը և պարզ եղանակը երթալով կը սաստկանան... Խեղճ գիւղացին ձեռքերը կրծքին ծալած այս սառն, մշուշապատ օդին՝ Մուշի փողոցները կը չափէ՝ կառավարութեան զուր աղերսագիրներ տալու, որ օգնութեան փութայ իր սովամահ անասունները փրկելու համար։ Սովորաբար տարւոյս մէջ, ամենախիստ ձմեռներուն իսկ, այսօր՝ մարտ 15-ը դաշտի բարեխառն կողմեր անպատճառ լուծք ելած կըլլար. իսկ այս տարի, ո՛հ, Տէր Աստուած, դեռ մէկ ամսով հեռու կերևի այդ բանը և մէկ ու կէս արշինէն աւելի ձիւն կայ դաշտը։ Եւ օրական հարիւրաւոր անասուններ քաղաքիս հրապարակը կը քաշուին՝ որը սատկած, որը մսագործին յանձնուելու վիճակին մէջ. իսկ թէ ինչե՞ր կը կատարուին ծայրագաւառները և խուլ անկիւններ ինկած գիւղերը, դա միայն սատանան գիտէ։ Եւ ինչ կընէ Մուշի կառավարութիւնը այս ընդհանուր աղէտին հանդէպ. ոչ այլ ինչ, բայց եթէ խըտացնել Թահսիլդար ոստիկան-զինուորներու շարքերը գիւղերու և գաւառներու մէջ։ Տուրքերու հաւաքումը, ինչպէս կըսեն, փայտ ու միս է, ամեն գնով գանձել 10—15 տարուան յետամնաց տուրքեր և նոյն իսկ այս մարտի աղնամը, որ ո՛վ գիտէ, գուցէ ոչխարներու $15^0/_0$-ը չպատի գարնան ելնելու։

Եւ ո՞ւր կերթան, ո՞ւր կը սպառին այսքան արիւն-քրտինքով գանձուած այս մեծագումար դրամները, երբ այստեղի զինուորական և քաղաքական պաշտօնէութիւնը երեք ամիսէ ի վեր ռոճիկ չէ կարող ստանալ և երկիրն ու վաճառականութիւնը կը տնքան սնանկութեան և անկուտխութեան ծանր բեռան տակ։

Զինուորներու վիճակը եթէ կը հարցնէք, զարմանալի է. վիճակագրութեամբ օրական 12—15 հոգի կը մեռնին և այն ալ այն աստիճան Թշուառութեան ու կեղտոտութեան մէջ, որ մարդ կը զզուի մօտենալ այդ տեսակ մեռելներուն՝ Թէկուզ ամենասիրելի հայ զինուոր մը ըլլայ դա։ Քահանայն ըսելով՝ ոջիլները աւելով կը սրբէ եղեր մեռած հայ զինուորներուն վրայէն։

Քաղաքիս անտեսական դրութիւնը սարսափելի է. մէկ լիտր յարդը բարձրացեր է 10 ղրուշի. սովորական տարիները եթէ մէկ լիտր յարդը բարձրանար 50—60 փարայի, շրթունքնիս կը խածնէինք։ Խուրձ մը ցախը (վախիլք) 6—7 ղրուշ է, փայտի լիտրը $2^1/_2$ ղրուշ։ Հացի գինն ալ երթալով կը բարձրանայ, իսկ շաքարը, քարիւղը (նաւթ) արդէն հասարակ ժողովրդեան անմատչելի են դարձեր։ Այս տարի քարիւղի տապօն, որ սովորաբար 30—35 ղրուշ էր, այժմ 80 ղրուշով ձեռք չի բերուիր. շաքարի լիտրը 45—50, այն ալ լաւ տեսակէն չկայ հրապարակի վրայ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐՈՂ ԿԻՆԸ

(Էսկիզ)

Երեկոյեան սիրած պարապմունքիս ժամն էր։

Զանգահարեցին. ներս եկողը ծանօթ դէմք երևաց։

Մի երիտասարդ, բաւական գեղեցիկ դիմագծերով տիկին էր...

Ես ճանաչեցի նրան. մեր հարևանուհին էր, տիկին Աննան։

Նրանք մի համեստ զոյգ էին կազմում. ապրում էին հանգիստ, խաղաղ. ես հաւանում էի այդ տիկնոջը. հաւանում էի նրա վառվռուն, աշխոյժ, կենդանի բնաւորութիւնը. հաւանում էի նրա անկեղծ, առանց ցեխոտ մտքերի, անփորձութիւնից առաջացած շատ յաճախ կրկնվող նոյնիսկ սխալանքները։

Տիկին Աննա անփորձ, ամեն բանի վրա ուղիղ իր իսկական-բնական գոյնով նայող մաքուր, կեանքի չարութիւնից դեռ չապականված տիպ էր ներկայացնում...

Ներս մտաւ նա բաւական այլայլված.

— Կարելի՞ է ձեզ խանգարել մի քանի րոպէով,—ասաց նա նախասենեակից դեռ չը հանված...

— Խնդրեմ, խնդրեմ... որքան կուզէք։

Ես աթոռ առաջարկեցի տիկնոջը իմ գրասեղանիս մօտ, և մենք նստեցինք դէմուդէմ։

— Խանգարեցի ձեզ, տէր հայր, այո, գիտեմ. գիտէի որ երեկոները դուք յաճախ պարապում էք. բայց... ինչ արած. ես... եկել եմ ձեզ մօտ... մի շատ կարևոր գործով...

Նա շուռ եկաւ և նայեց դէպի միւս սենեակները տանող դռներին.

— Ինչքան ժամանակ է,—շարունակեց նա,—ուզում եմ գալ, խօսել ձեզ հետ, բայց... չէի համարձակվում ձեզ խանգարել։ Մի անգամ նոյնիսկ եկայ հասայ ձեր դռանը և... նորից վերադարձայ... Այսօր, վերջապէս, հաւաքեցի բոլոր ոյժերս և եկայ, և այժմ սպասում եմ ձեր խորհրդին...

— Խնդրում եմ, տիկին, առանց քաշվելու և առանց ճնշվելու խօսել ինձ հետ և խորհրդակցել. ես ինչպէս այսօր, նոյնպէս և միշտ պատրաստ եմ ձեզ օգնելու ինչով կարող եմ...

Բաւական ժամանակ էր, որ ես չէի տեսել տիկին Աննային և այդ ժամանակամիջոցում ես որոշ փոփոխութիւն էի նկատում նրա մէջ. նա, կարծես, գունատված և նիհարած էր երևում. խօսում էր բաւական այլայլված, ջղային շարժումներ էր անում...

Նա նորից շուռ եկաւ դէպի դուռը և մի կասկածելի հայեացք ձգեց այն կողմը։

— Ինչո՞ւ էք նայում դռանը. գուցէ կասկածում էք, որ մեզ լսողներ կան... Խնդրում եմ ապահով լինել և խօսել ազատ ու համարձակ. մեզ լսողներ չը կան...

Ես իսկոյն վեր կացայ և աւելի միամտութեան համար ցած գցեցի միւս սենեակը տանող դրան վարագոյրը...

— Այո... դէ՛հ լսեցէք։

— Ես եկել եմ, տէր հայր, ձեզ խնդրելու, որ դուք բաժանէք ինձ իմ ամուսնուցս կամ գոնէ օգնէք ինձ իմ այդ մտադրութիւնը իրագործելուն... Ես այլևս անկարող եմ շարունակել այդ տեսակ կեանք... տանջվեցի, մաշվեցի և այլևս ոյժ չունեմ, կարողութիւն չունեմ դիմանալու, հասկանում էք... Օգնեցէք ինձ...

— Տիկին, ինչ է պատահել ձեզ... Դուք ցանկանում էք բաժանվել ձեր ամուսնուց... Դուք, որ այնքան սիրով ամուսիններ էիք... Ի՞նչ է պատահել ձեզ...

Տիկնոջ ներսը կատարվում էր մի սոսկալի դրամա. նրա աչքերը վառվում էին. կուրծքը յաճախ ցածրանում և բարձրանում էր ի նշան նրա ներսը կատարվող ալեկոծութեան. անկանոն շնչառութիւնը և սրտի բախումը արգելում էին նրան կանոնաւոր նախադասութիւններ արտասանելու...

— Այո, ես վճռել եմ այդ քայլը անել, որովհետև անկարող եմ այլ ևս համբերել և շարունակել այդ կեղծ դրութիւնը...

— Բայց, տիկին, պարզեցէք, խնդրեմ, ինչի՞ց առաջացաւ ձեր մէջ այդ միտքը. միթէ ձեր ամուսինը ձեզ չը սիրելու նշաններ է ցոյց տուել, որ անհաւատալի է, կամ նա Թոյլ է տուել իրան որևէ կոպտութիւն ձեր վերաբերմամբ և կամ Թէ անհաւատարմութեան նշաններ էք նկատել...

— Օ՜, ո՛չ...

— Հապա՞...

— Ոչ այս և ո՛չ այն. նա ինձ առաջվայ նման խելագարի պէս սիրում է. նա կատարում է բոլոր իմ ցանկութիւնները. իսկ վերջին ժամանակները նկատելով իմ մէջ որոշ փոփոխութիւն, տխրութիւն և առհասարակ ջղային դրութիւն, նա չը գիտէ Թէ ինչ անէ. իսկ ես, ես տեսնելով նրան՝ խնայում եմ, չափազանց խնայում եմ նրան. և այդ կեղծ դրութիւնը ուտում է իմ ներսը, հասկանո՞ւմ էք, ուտում է...

— Տիկին, ես ձեզ չեմ կարողանում հասկանալ. եթէ նա առաջվայ պէս սիրում է ձեզ, հապա ինչի՞ց էք դուք անբաւական. ինչն է ստիպում ձեզ այդ քայլը անելու...

— Ինչն է ստիպում... ա՛խ...

Նա նորից շուռ եկաւ և մի անգամ էլ հայեացք ձգեց վարագոյրով ծածկված դռանը. նա չափազանց դիւրագրգիռ էր դարձել. ամեն մի փոքրիկ շշուկ, ամեն մի ոտնաձայն վախեցնում էին նրան...

— Ես... ես... գիտէ՞ք...

Նա չը կարողացաւ ասել և ձեռներով ծածկելով երեսը՝ սկսեց լաց լինել...

— Հանգստացէք, տիկին, մի՛ մոռանաք, որ դուք քահանայի մօտ էք գտնվում և ազատ ու համարձակ կարող էք ձեր սիրտը բաց անել... մանաւանդ ապահով եղէք, ձեզ ասացի, որ լսողներ չը կան...

— Ես... ես... գիտէք... ես... ուրիշին եմ սիրում...

— Դուք ուրիշին էք սիրո՜ւմ,—կրկնեցի ես նրա խօսքերը զարմացած, և երկուսս էլ ցած գցեցինք մեր աչքերը...

Մի վայրկեան մենք երկուսս էլ լուռ էինք։

— Այո, ես ուրիշին եմ սիրում,—խօսեց նորից տիկինը.—կարդարացնե՞ք, արդեօք, իմ այդ վարմունքը Թէ՞ կը պախարակէք, չը գիտեմ. վերջապէս դա միևնոյն է ինձ համար. ես սիրում եմ... սիրում եմ ամբողջ իմ սրտիս Թափով... սիրում եմ անշահախ, մաքուր սիրով... ես մեղաւոր չեմ. հաւատացէք ինձ, որ մեղաւոր չեմ... մինչև անգամ մտքովս երբէք չէր կարող անցնել այդպիսի բան. բայց... ես տեսայ, ծանօթացայ նրա հետ, սկսեցինք պատահել և ես... սիրեցի նրան...

— Պատահում էք, երևի, և այժմ։

— Այո, պատահում ենք. բայց... ահա երկրորդ տարին է, որ ես պատահում եմ նրա հետ և ամեն անգամ ես կրում եմ սոսկալի տանջանքներ։ Բայց իմացած եղէք, որ ես երբէք չեմ Թոյլ տուել ինձ մի որևէ անհաւատարիմ քայլ դէպի իմ ամուսինը... Եւ չեմ էլ Թոյլ տայ, քանի որ գտնվում եմ նրա օջախում, նրա յարկի տակ... Այժմ կարող էք երևակայել իմ տանջանքները, Թէ նրա հետը և Թէ տանը. սիրել, տանջվել, հեռու լինել, Թաքցնել... և դրա փոխարէն տեսնել ամեն պատրաստակամութիւն և ամենասիրելի վերաբերմունք ամուսնուդ կողմից. երևակայո՞ւմ էք իմ դրութիւնը... Օ՜, սոսկալի է, անտանելի է, դուք չը գիտէք։ Գուցէ լինէր մի ուրիշը իմ տեղ, որ ապրելով իր ամուսնու յարկի տակ՝ միևնոյն ժամանակ դաւաճանէր նրան. բայց ես... ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ. ես չեմ Թոյլ տայ ինձ այդ. ես երբէք չեմ շահագործի նրա մաքուր, անկեղծ վերաբերմունքը իմ նպատակներիս համար. կամ այստեղ և կամ այնտեղ. այս է իմ նշանաբանը։

Նա կանգ առաւ։

Տիկինը ոգևորվել էր։ Նա, կարծէք Թէ հանգստացել էր՝ իր սրտի գաղտնիքը բաց անելով իմ առաջ. և այժմ բացվել էր նրա կաշկանդված լեզուն, և նա ճառում էր...

— Այժմ հասկանալի՞ է ձեզ իմ դրութիւնը։ Ես վճռեցի վերջ տալ այդ անտանելի կեանքին և բաժանվել ամուսնուցս սիրով, առանց անբաւականութիւնների։ Եւ ահա եկել եմ ձեզ մօտ. օգնեցէք ինձ, խնդրում եմ, աղաչում եմ ձեզ, օգնեցէք և ազատեցէք ինձ այդ դրութիւնից...

— Ես հասկացայ ձեզ, յարգելի տիկին, բայց, դժբաղդաբար, ամբողջ սրտիս ցանկութեանը հակառակ, չեմ կարող ձեզ այդ գործում օգտակար լինել։

— Ինչո՞ւ...,—կտրեց իմ խօսքը տիկինը։

— Այն պարզ պատճառով, որ մեր եկեղեցին բաժանում է օրինական ամուսիններին սահմանված որոշ օրէնքների հիման վրա. իսկ ձեր պատմածից չէ երևում, որ խախտված լինեն ամուսինների կողմից օրէնքների այդ կէտերը։ Դուք երկուսդ էլ առողջ էք, ամուսնական կեանքին ընդունակ, երկուսդ էլ հաւատարիմ մինչև օրս ձեր ամուսնական սուրբ ուխտին. եթէ ունենայիք վերև յիշածս պատճառներից մէկն ու մէկը, այն ժամանակ գուցէ հնարաւոր լինէր...

— Ապա ինչ պէտք է լինի իմ դրութիւնը...

— Գուցէ դուք կարող լինէք գտնել ձեր ամուսնու կեանքի մէջ անհաւատարմութեան որևէ դէպք և մի որևիցէ կերպով ապացուցէք այն. այն ժամանակ...

— Ի՞նչ... սո՞ւտ հնարել... և այդպիսով հասնել նպատակիս. ո՛չ, երբէք ես չեմ Թոյլ տայ ինձ այդ...

— Ուրեմն եկեղեցին ձեզ չէ կարող բաժանել։

— Եւ ես պէտք է մնամ և շարունակեմ

Գիւղերու վիճակն աւելի սարսափելի է։ Այս ընդհանուր տառապանքներու հետ քիւրդական հալածանքն ու խժդժութիւնները երթալով կը սաստկանան։

Մշեցի

ԿԵԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ուստր, 31 մարտ (ն. տ.)

Վերջացող ամսուայ մէջ քանի մը ուշագրաւ դէպքեր ու պարագաներ ունեցանք, որոնց վրայ անդրադառնալ կարժէ։

Մարտ 4-ին նախագահական աթոռին վրայ բարձրացաւ մեծ և շքեղ հանդիսաւորութեամբ մը նախագահ Ուօլթըր Ուիլսըն, որուն ընտրութիւնը աննախընթաց յաղթութիւն մը նկատուեցաւ ռամկավարականներու տարեգրութեան մէջ։ Այս առիթով Վաշինգտոնի Ճերմակ տունը (White house), որ վերջին 14 տարիներու շրջանին հանրապետականներու սեփականութիւնը դարձած էր, անցաւ դէմօկրատներու կոնտրօլին տակ, որուն տիրելու մարմաջը վաղուց կը սնուցանէին ինքնավստահ, այլ յուսահատ թափով։

Իր գերեզմանին մօտեցած ու օրհասական վախճանի մէջ գտնուող դէմօկրատ կուսակցութիւնը այս յաղթութիւնով նոր կեանք ստացաւ, վերակենդանացաւ ու նոր ոգեւորութեամբ ու խանդավառութիւնով հրապարակ եկաւ՝ Միացեալ-Պետութիւններու կեանքի իրականութեան մէջ երևան բերելու այն ոսկեգոյն հրաշալիքները, անիրականալի երազներն ու երջանկաբեր օրերը, որոնցմով հասարակութեան միտքն ու ուշադրութիւնը տարիներով օրօրեր էր... Տեսնենք, սակայն, թէ դէմօկրատ կուսակցութեան մեծամեծ խոստումները՝ իրականութեան մէջ ինչ կշիռ և արժէք պիտի ունենան։ Մեր համեստ կարծիքով՝ յուսախաբութիւն ու պատրանք պիտի ըլլայ արձագանգը և ուրիշ ոչինչ։

⁂

Ամսոյս վերջին շաբթուան մէջ Օհայօյի և Ինդիանայի նահանգները սոսկալի հեղեղներու թատր եղան։ Օհայօ անունով գետը արտասովոր յորդումով մը ողողեց իր սահմանակից քաղաքներն ու գիւղաքաղաքները, որուն հետեւանքով միլիոնաւոր դոլլերներու կորուստ ունեցան և 7000-ի մօտ անձեր զոհ գացին այդ քաղաքներուն մէջ ապրողները։ Գետը տակաւին կը բարձրանայ զօրաւոր թափով մը, վտանգի տակ են Dayton ու Cincinati խոշոր քաղաքներն ու կարգ մը երկրորդական տեղեր, որոնց մէջ գտնուող բնակչութեան մեծագոյն մասը՝ տուներնին-տեղերնին կորսնցուցած՝ անօգ ու կարեկից վիճակի մը ենթարկուած կը մնան։ Նախագահ Ուիլսըն իսկոյն կոչ մը ուղղեց Միացեալ-Պետութիւններու հասարակութեան՝ շուտընդփոյթ օգնութիւն հասցնելու վերոյիշեալ տարաբաղդ երկու նահանգաց աղէտեալներուն, որոնք անկարեկիր գետերու խելայեղ արշաւանքին զոհ դարձան։

Նախագահին սոյն սրտառուչ կոչը իսկոյն արձագանգ գտաւ ամէն կողմ, հանգանակութիւնները բացուեցան և մէկ-երկու օրուան մէջ գումարը հազարաւոր դոլլերներու բարձրացաւ։ Գոյքի և ստացուածքի ընդհանուր կորուստը 200 միլիոն ռուբլին կանցնի։ Աղէտը իսկապէս մեծ է, անոր թողած վատ արդիւնքը հազիւ թէ շուտով մոռցուի...

⁂

Հռոմէն ստացուած հեռագիրները այսօր գուժեցին մահը Ամերիկայի սեղանաւորական ու միանգամայն դրամական հրապարակին տիրող Ճ. Փ. Մորգընի, որ դրամի թագաւոր (money ring) անունով կը ճանչցուէր։ Մորգընի մահը ցնցող ու վատ տպաւորութիւն ձգեց ամբողջ երկրին վրայ։ Իր առողջութեան մասին վերջերս ստացուած հեռագրալուրերը թէև մտահոգիչ էին, բայց մահը մօտալուտ չէր կարծուեր։ Այսու հանդերձ բոլորովին անսպասելի չէր Մորգընի կեանքի վերջալոյսը, որ վերջապէս հասաւ իր 75 տարիներու յառաջացած հասակին մէջ։

Մորգըն ծնած է 1837 ապրիլ 17-ին, Հարթֆըրտի (Conn) մէջ։ Իր նախնական կրթութիւնն ստացած է տեղւոյն հասարակաց դըպրոցներուն մէջ և յետոյ Բօսթընի բարձրագոյն դպրոցին շրջանաւարտ։ Անկէ վերջ մտած է Գէօթինգընի համալսարանը (Գերմանիա)։ Սեղանաւորական ասպարէզն ընդգրկած է 1857-ին։ Տասնեւչորս տարի ուրիշներու ծառայելէ ետք՝ 1871 թուականին կը հիմնէ իր սեղանաւորական տունը և այս երկրի հրապարակին վրայ կը բանէ առաջնակարգ դիրք։

Նախագահ Քլէվլանդի պաշտօնավարութեան շրջանին 400 միլիոն ռուբլիի կառավարական արժեթղթեր կը ծախէ, երկրին տնտեսական զարհուրելի տագնապին առաջքն առնելով։

Մորգըն ելեւմտագէտի արտասովոր տաղանդով օժտուած ըլլալով՝ կրցած էր Միացեալ-Պետութիւններու հսկայ ընկերութիւններու (Տրըստ անունով ճանչցուած) ղեկը իր ձեռին առնել և իր ուզածին պէս կառավարել։ Իր տեսչութեան ենթարկուած էին հարիւրի մօտ սոսկավիթխար ընկերութիւններ, որոնց դրամագլխի համարժէքը մէկ երկիլիօն դոլլերի կը հասնէր։

Մորգընի մահով այս երկիրը կը կորսնցնէ իր էն մեծ ելեւմտագէտն (financier) ու դրամատէրը (banker), որ Ամերիկայի դրամական հսկայ գործառնութեանց շարժիչ ուժն ու գլխաւոր մեքենան կը կազմէր։

Ու-Սթրիթի (Նիւ-Եորք) սակարանը մեծ փոփոխութիւն չկրեց այսօր, երբ Մորգընի մահն իմացուեցաւ, բայց ամեն պարագայի տակ նշանակելի յեղաշրջում մը անխուսափելի կը սեպուի։ Ամերիկան բարեբաղդ պիտի կոչէինք, եթէ սոյն սպասելի յեղաշրջումով տագնապներ ու թշուառութիւններ յառաջ չգային...։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ

Բացի Թիւրքահայաստանից անմիջապէս եկած գաղթականներից, կան և ուրիշ տեսակի գաղթականներ. բալկանեան պատերազմի ժամանակ գերի ընկած հայ զինւորներն են դրանք։ Բօլգար և սերբ կառավարութիւնները նրանց բաժանել են թիւրք գերիներից, դրամ են տուել ու ազատ արձակել, թոյլատրելով հայրենիք վերադառնալ։ Ազատուած գերիներից մի քանի հոգի եկել են Կովկաս, բրուսացիներ և սասունցիներ, թւով 6 հոգի, և այժմս դեգերում են Թիֆլիսում. մտադիր են հայրենիք վերադառնալ. բայց հայրենիքից նոր եկածները խորհուրդ են տալիս չը գնալ, որովհետև թիւրքերը էլի կը բռնեն ու պատերազմի դաշտը կուղարկեն։ Բայց հայրենիքի և ազգականների կարօտը կայ այս յաղթանդամ և ուժեղ մարդկանց մէջ. Նրանք որոշել են գնալ հայրենիք, գոնէ մօտիկ լինել սահմանին և առաջին հնարաւոր դէպքում իսկոյն անցնել գիծը և տէր դառնալ ունեցուածքին։

Նրանք դրամ չունեն ճանապարհը շարունակելու. աշխատանք են որոնում, որպէսզի մի քանի ռուբլի գտնեն և իրանց՝ սահմանի մօտ գցեն։

Մենք ջերմապէս խրախուսելով ազատուած գերիներին, որ օր առաջ վերադառնան հայրենիք և պաշտպան կանգնեն իրանց ազգականներին ու կալուածներին, սրանով դիմում ենք ազգային հիմնարկութիւններին և բարեսէր անհատներին՝ օգնութեան գալ, նպաստել, որ բրուսացի և սասունցի պանդուխտները շուտով վերադառնան հայրենիք և գիւղատնտեսական պարապմունքների սկիզբը գտնեն։ Գարունն արդէն սկսվել է. մի քանի շաբաթ յետոյ արդէն ուշ կը լինի։

Օգնեցէք նրանց, տուէք մի քանի ռուբլի, մի սպասէք, որ իրանք գան և ձեր դուռը բախեն. նրանք աւելի շուտ կը գնան աշխատելու, քան դրամ մուրալու. իսկ ձեր ինքնաբերաբար տուած դրամը նրանք կընդունեն որպէս եղբայրական օգնութիւն և անմիջապէս հայրենիք կը վերադառնան։

Տուէք, ինչքան կարող էք։

Գ. Տէր-Ռուբէնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բաթում մեկնեցին փոխարքային բժշկող բժիշկներ Ադամեան և Բուրդէնկօ։

◆ Երէկ, ցերեկվայ ժամը 2-ին, կայացաւ Արտիստական Ընկերութեան շինութեան մէջ դօկտոր Բլիւմէնտալի 2-րդ հակա-Թոքախտային ցուցահանդէսը, կազմակերպված Թոքախտի դէմ Մաքառող Կովկ. Ընկերութեան կողմից։ Ցուցահանդէսի բացումը հրատարակելուց առաջ քաղաքագլուխ Ալ. Խատիսեան մի ճառով բացատրեց հրաւիրվածներին Թոքախտի դէմ Մաքառող Կովկ. Ընկերութեան գործունէութիւնը, հրաւիրեց մամուլին և բժիշկներին առաջվայ նման ջերմ և եռանդուն աջակցութիւն ցոյց տալ գործին։

◆ Սպիտակ ծաղկի օրը քաղաքի զանազան մասերում շինված կը լինեն կէօսքեր՝ ծաղիկներ վաճառելու համար։ Գլխաւոր կէօսքերը լինելու են Արքունական թատրոնի մօտ, Արտիստական Ընկերութեան թատրոնի մօտ, Օլգինսկի փողոցի անկիւնում և Միքայէլեան պրօսպէկտի վրա։ Այժմեանից վերահսկողութեան աշխատանքները բաժանված են տիկինների միջև։

◆ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութիւնը Նիկոլաևսկայա փող. № 68 տանը վարձել է 5 սենեակից բաղկացած մի բնակարան թոքախտաւոր հիւանդներին ընդունելու համար։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը յայտարարում է. «8-րդ քաղաքամասի պրիստաւը տեղեկացրեց, որ լոյս ապրիլի 6-ի գիշերը Կուր գետի ջուրը այն աստիճան աւելացաւ, որ մի քանի տեղերում դուրս եկաւ ափերից և ծածկեց Մէննի նրբափողոցը, Դէսիմօնօվի հրապարակի մի մասը, նաև Պօդպօլովայի իջեանատեղին, մօտ. Գալօշկօվի № 23 տան նկուղը, որի մէջ գտնվում էին խոտ ու ածուխ, Պարունջամբէկովի № 29 տան ներքին մասերը, նաև նոյն փողոցի № 17, 19 և 21 տների նկուղները։ Մարդկանց հետ դժբաղդութիւն չեղաւ։ Ներկայումս գետի ջուրը աստիճանաբար պակասում է։ Ձեռք են առնված նախազգուշական միջոցներ»։

◆ Ուրբաթ, ապրիլի 5-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում կայացաւ ռուս գրող-բելլետրիստ Ֆէօդոր Սօլօգուբի դասախօսութիւնը «Մեր օրերի գեղարուեստը» թեմայով։ Ահագին դահլիճը լի էր խուռն բազմութեամբ։ Սակայն դասախօսութիւնը անգոհացուցիչ էր և հիասթափեցրեց շատերին։ Աւելի մանրամասն կը խօսենք յետոյ։

◆ Հայոց Ազգագրական Ընկերութիւնը հայկական տպագրութեան և գրքի գիւտի յօբելեանի առիթով կազմակերպելով հայկական հրատարակութիւնների ցուցահանդէս, որի մէջ ամբողջական տեղ պիտի բռնի ռուսահայոց պարբերական մամուլը, բացի սրա գրախօսութիւնից, ցանկանում է կազմել նաև ռուսահայ բոլոր, սկզբից մինչև այժմ եղած պարբերական հրատարակութիւնների խմբագիրների խմբանկարը. ուստի և խնդրում է խմբագիրների ազգականներին ու ծանօթներին ուղարկել ընկերութեանը խմբագիրների լուսանկարները, եթէ կարելի է՝ վիզիտ ձևով։

◆ Ներսիսեան դպր. հոգաբարձութիւնը խնդրում է տպել, որ ինքն ստացել է տիկ. Ի. Ի. Ջալալեանից՝ հանգուցեալ Ս. Ս. Խոստամնեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ 25 ռուբ. յօգուտ դպրոցի աշակերտական սեղանատան, որի համար և յայտնում է շնորհակալութիւն նուիրատուին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է հանգուցեալ տիկ. Սօֆիա Սաղաթելեանի կարգադրութեամբ նրա որդիներից յօգուտ Ընկ. աշակերտական ճաշարանի 100 ռուբլի, որի համար խորհուրդը յայտնում է շնորհակալութիւն նուիրատուներին։

◆ Վաղը դումայի նիստում քաղաքային վարչութիւնը առաջարկելու է դատ սկսել քաղաքային իւրիսկօնսուլտի նախկին օգնական Գ. Քամանեանի դէմ՝ իրան յանձնված գումարները վատնելու համար։

◆ Այսօր նշանակված է Թիֆլիսի 2-րդ փոխադարձ վարկի ընկերութեան երկրորդ ընդհանուր ժողովը։

◆ Մէյդանում Բագիրովի տանը բացվելու է պօստային բաժանմունք։

◆ Թոյլատրված է խաղալ ռուսերէն «Знахарь» պիէսը։

◆ Նահանգապետի թոյլտուութեամբ վրաց ազնուականութիւնը գումարվելու է ապրիլի 10-ին Կախեթի երկաթուղու մասին զեկուցում լսելու համար։

◆ Թիֆլիսի 6-րդ գիմնազիայի IV, V և VI դասարանների աշակերտները իրանց դասատուների ղեկավարութեամբ էկսկուրսիայով մեկնում են Բաթում այսօր երեկոյեան։

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂԱՐ.

ՍԱՅԱԹ-ՆՕՎԵԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Սայաթ-Նօվայի երեկոյթը Թիֆլիսի ժողովարանում ունեցաւ նշանաւոր ժողովրդական երգչին արժանաւոր մի փայլուն աջողութիւն։

Ներկայ Թիֆլիսը եկել էր վերյիշելու իր հայրերի և պապերի սիրելի երգերի տաղանդաւոր երգիչ-բանաստեղծին։

Երեկոյթը կրում էր ժողովրդական-ազգագրական բնաւորութիւն և մեծ հաւանութիւն գտաւ հանդիսականների կողմից։

Երեկոյթի կազմակերպողները նպատակ էին ունեցել թէ ծանօթացնելու հասարակութեանը Սայաթ-Նօվայի ստեղծագործութիւնների հետ և թէ երեկոյթի եկամուտով հայթայթել միջոցներ Սայաթ-Նօվայի մահարձանի կառուցման համար։

Երեկոյթի կարգադրիչներն էին՝ իշխանուհի Մ. Թումանեան, Յովհ. Թումանեան, Գ. Բաշինջաղեան, Ալ. Քալանթար և Գիւտ ք. Աղանեան, որոնք միեւնոյն ժամանակ անդամներն են մի աւելի ստուար յանձնաժողովի, որ կազմված է Հայ Գրողների Ընկերութեան նախաձեռնութեամբ նրա վարչութեան անդամներից և հրաւիրված անձերից և նպատակ ունի որոշ ծրագրով յաւերժացնել Սայաթ-Նօվայի յիշատակը թէ հրատարակութիւններ անելով, թէ երեկոյթներ կազմելով և թէ բանաստեղծի մահարձան կանգնեցնելով։

Սայաթ-Նօվայի աշխատութիւնները, ամփոփված՝ մի հատորի մէջ, վայելուչ կազմերով դրված էին ցանկացողներին վաճառելու համար։ Գեղարուեստօրէն կազմված մի թերթիկ բաժանվում էր երեկոյթի ծրագրով։

Բեմը զարդարված էր գեղեցիկ ճաշակով։ Գորգեր և թախտեր տալիս էին բեմին բուն կովկասեան բնաւորութիւն։

Վարագոյրը բացվելուց բեմը հանդիսացաւ իբրև արևելեան երաժշտական մի մէջլիս։ Յովհ. Թումանեան արեց մի ամփոփ բանախօսութիւն Սայաթ-Նօվայի մասին, բնորոշելով նրա թողած և մեր ձեռքն հասած բանաստեղծական ստեղծագործութիւնները։ Յետոյ խումբը նուագեց և երգեց բազմաթիւ գործիքների վրա, ինչպէս էին՝ ջութակ կամ քեամանչա, թառ, սազ, մեծ սազ, դափ։

Երգերի բաժինը վերցված էր Սայաթ-Նօվայի բանաստեղծութիւններից։ Երգիչ-երաժիշտներ Հազրի, Ֆիգօ, Միրզա, Միշա, Արզար, երաժիշտ Ռուբէն մեծ հաճոյք պատճառեցին իրանց իւրատիպ երգերով և նուագներով։

Դերասաններ Միրզաեան և Մամիկոնեան աջող շեշտերով արտասանեցին Սայաթ-Նօվայի երկ-երկու երգերը։

Այնուհետև տեղի ունեցաւ աշուղական մրցութիւն հարց ու պատասխանի ձևով, որը հետաքրքրեց հանդիսականներին և առաջ բերեց երկարատև ծափահարութիւններ։

Երգիչ Հազրի աջող պատասխանները դարձրին նրան բեմական յաղթող, որը ստացաւ իբրև նուէր մի շալ։

Դրանով աւարտվեց գրական երաժշտական մասը։

—

Վերջում տեղի ունեցան արևելեան պարեր սազանդարների նուագածութեամբ։ Պարեցին կանայք և տղամարդիկ կովկասեան պարեր։

Իզաբէլլա Քալանթար վերին աստիճանի նրբութեամբ պարեց «ռանգի» ու «նունուֆար» պարերը և արժանացաւ ընդհանուրի հաւանութեան և բուռն ծափահարութեան։

Տեղի ունեցաւ և լեզգինկա։ Իսկ ամենավերջը «կօլօր» պար, որին մասնակցեցին տղամարդիկ և կանայք ազգային տարազով։

Երեկոյթը ունեցաւ մեծ աջողութիւն և մտադրութիւն կայ կրկնել այս անգամ հաւանօրէն Արտիստական Ընկերութեան համերգային դահլիճում։ Ես.

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ*)

Գ. Իփէկեանը պաշտպանում էր այն կարծիքը, թէ տնտեսական-հասարակական ազատութիւնը բաւական չէ կնոջ ազատագրելու համար. կինը ազատ կը լինի այն ժամանակ, երբ նա սեռական յարաբերութիւնների խնդրում նոյնպիսի ազատ իրաւունքներ վայելի, որպիսին ունի տղամարդը։

Փափօվեան առանձին թափով յարձակվեց դասախօսի վրա, որ նա իր երկար դասախօսութիւնից յետոյ վարվեց այնպէս, ինչպէս գիւղական քահանան իր երկարող քարոզով, թէ՝ «եթէ գիտէք աւելիքս՝ էլ ինչու ասեմ, իսկ եթէ չը գիտէք, թող գիտեցողները ասեն չը գիտեցողներին»։ Պարոնը առանձնապէս ընդգծեց իր համակարծիք լինելը այն ճառախօսների հետ, որոնք հասարակական-տնտեսական տեսակէտի վրա էին կանգնած։ Կինը կազատագրվի, երբ ազատագրվի աշխատաւոր զանգուածը։

Ճուղուրեան քահանան չէ կարող համաձայնվել այն մտքի հետ, թէ երբևիցէ կինը կարող կը լինի «մարդանալ», այսինքն տղամարդու հաւասարվել։ Երբեք կովը եզ չի դառնայ, երբեք հաւը՝ աքաղաղ։ Մենք ոչ թէ կանանց ազատագրութեան մասին պէտք է մտածենք, այլ, ընդհակառակը, ինչպէս անենք, որ կանանց ձեռքից տղամարդկանց ազատենք, ասում էր Ճուղուրեան քահանան։ (Նրա խօսքերը ընդհատվում էին դահլիճում տիրող ծիծաղով)։ Նա կողմնակից է հայ կնոջ կրթութեան։

Տիկ. Վարդանեան նոյն կարծիքն է պաշտպանում, ինչ տնտեսական տեսակէտի կողմնակիցները։ Նա շեշտեց, որ կնոջ ազատագրման խնդիրը տղամարդու աւելի գիտակցութեան շրջանում գոյութիւն ունի, քան զգացմունքի։ Կնոջ ազատագրութիւնը աշխատաւոր դասակարգի ազատագրման հետ է կապված։ Տիկինը նաև մեծ նշանակութիւն է տալիս աղջիկների և տղաների խառն կրթութեան և դաստիարակութեան սկզբունքին, որով երկու սեռերի միջև եղած անջրպետը կարող է վերանալ։

Ա. Երզնկեան քննադատելով դասախօսութեան դեֆեկտները ընդգծեց, թէ ֆեմինիզմը զուտ բուրժուական շարժում է և, իբրև այդպիսին, ապագայ հասարակական կազմակերպութեան տեսակէտից յետադիմական։ Տակտիկական տեսակէտից կարելի է հանդուրժել այդ շարժմանը, բայց սկզբունքային՝ ոչ. նա ազատագրել բոլոր կանանց չէ կարող. ընդհակառակը՝ կը լինի ցենզաւոր կանանց մի փոքրաթիւ հասարակութիւն՝ մի կողմից, և իրաւազուրկ աշխատաւոր կանանց ստուար մեծամասնութիւն՝ միւս կողմից։ Որովհետև նախորդ ընդդիմախօսները խօսեցին արդէն տնտեսական-հասարակական միջավայրի նշանակութեան մասին, ուստի Ա. Երզնկեանը այլ ևս կանգ չառաւ այդ խնդրի շուրջը։

Մ. Զաշկեանը միանգամայն համաձայն է Ա. Երզնկեանի ասածներին։

Խօսեցին նաև նրանք, որոնք առաջին երեկոյթին հակաճառել էին դասախօսին (Սօլովեան, Ա. Յարութիւնեան, Համբարձումեան)։

Սօլովեանը խօսեց իր ձեռքի տակ ունեցած վիճակագրական տեղեկութիւնների և փաստերի հիման վրա. նա շեշտեց նոյն միտքը, ինչ արտայայտել էր անցեալ անգամ, աւելի զարգացնելով այն. նրա համար նոյնպէս միակ ընդունելի տեսակէտը պատմական մատերիալիզմն է, որը խօսում է գիտական փաստերի և թւերի վրա հիմնված։

Ա. Յարութիւնեան նոյն տնտեսական տեսակէտի կողմնակիցն է, բայց ֆեմինիզմը համարում է առաջադիմական քայլ, որովհետև նա համեմատական ազատութիւն է տալիս կնոջը։

Համբարձումեանը կրկնեց իր անցեալ օրվայ ասածները և պատմական մատերիալիզմի հասցէին մի քանի անորոշ առարկութիւններ արեց, առանց հիմնաւորելու իր ասածները։

Ամենից յետոյ խօսեց դասախօս Տ. Յովհաննիսեան։ Ընդդիմախօսներին նա բաժանեց երեք մասի։ Պատմական մատերիալիզմի տեսակէտի վրա կանգնողներին նա համարեց իր դասախօսութեան լուրջ քննադատներ։ Իր դեֆեկտների նկատմամբ նա խոստովանեց, բայց շեշտեց, որ 1½ ժամվայ ընթացքում ոչ մի հնար չը կար նիւթը սպառելու. և վերջապէս նա յաւակնութիւն էլ չէ ունեցել իր դասախօսութեան վրա այդ աչքով նայելու։ Ապա չը պիտի մոռանալ տիրող պայմաններն ու հանգամանքները։ Յամէնայն դէպս պատմական մատերիալիզմի տեսակէտը նա չէ կարող ընդունել. ընդունում է միայն, որ տնտեսական ֆակտորը զօրեղագոյններից մէկն է կեանքում միւս ֆակտորների հետ միասին։ Որ ֆեմինիզմը առաջադիմական շարժում է, դրանում նա չէ կասկածում։ Ընդունում է, որ հեռու ապագայում գալիք հասարակական նոր կազմակերպութիւնը կարող է կնոջը ազատել լիովին, բայց դա չէ նշանակում, որ այժմ կինը չէ կարող իրաւական նոյն ազատութիւնը վայելել, ինչ տղամարդը։ Ներկայ մարդկութեանը նա նմանեցնում է մի արծուի, որի մի թևը կոտրած է, և դա կնոջ դասն է։ Արծիւը կը սաւառնի այն ժամանակ, երբ նրա երկու թևերն էլ ուժեղ և առողջ լինեն։

Վիճաբանութիւնները վերջացան մօտաւորապէս գիշերվայ ժամը 12-ին։ Հասարակութիւն բաւական կար։ Ընդմիջումին մի քանի ոտանաւորներ արտասանեց տիկ. Սեւումեան բուռն ծափահարութիւնների տակ։

*

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պարիզի ֆինանսական համաժողովում Ռուսաստանի ներկայացուցիչ հանդիսանում է Լ. Դաւիդօվը։

իմ այդ կեղծ և աննորմալ դրութիւնը՞... պէտք է շարունակեմ իմ տանջանքները՞... խորհուրդ տուէք ինձ, ինչ անեմ ես. իմ ներկայ դրութիւնը կարող է անցանկալի և տխուր հետևանքների հասցնել... Իմ մէջ աստիճանաբար որոշ սառնութիւն և նոյնիսկ... ատելութիւն է առաջ գալիս դէպի իմ անմեղ ամուսինը... որ ապագայում մեծամեծ չարիքներ կարող է առաջացնել...

— Մտնում եմ ձեր դրութեան մէջ,—ասացի ես,—բայց կրկնում եմ, անկարող եմ որևէ բան անել. իմ խորհուրդն է ձեզ, գուցէ և վիրաւորական ձեզ համար, մոռացէք, եթէ հնարաւոր է, նրան և համակերպվեցէք սիրով ձեր ամուսնու հետ...

Տիկինը մի ախ քաշեց և իսկոյն ոտքի կանգնեց։

— Ներեցէք ինձ ձեզ անհանգստացնելու համար և բարև մնացէք։

Նա մեկնեց ինձ իր ձեռքը և ուժգին սեղմեց.

— Ինձ էլ ներեցէք, որ չը կարողացայ ոչնչով օգնել ձեզ։

Տիկինը շտապ հագնվեց և դուրս եկաւ։

— Մնաք բարև,—նորից կրկնեց նա դըռնից։

— Երթաք բարև.

Եւ այլևս ես չը տեսայ տիկին Աննային։

Այդ օրվանից անցել էր մօտաւորապէս մի ամիս։

Երեկոյ էր. ես դարձեալ նստած գրասեղանիս մօտ՝ պարապում էի։

Զանգահարեցին. ներս եկողը մեր հարևանի ծառան էր։

— Տիկին Աննան շատ ծանր հիւանդ է, խնդրում են ձեզ գնալ իրանց մօտ...,—ասաց ծառան։

Ես իսկոյն թողեցի ամեն բան և շտապեցի նրանց տուն։

Դուռը առաջս վազեց տիկին Աննայի ամուսինը հեկեկալով.

— Ուշացաք, Աննան մեռաւ... Իմ սիրելի, իմ աղիզ Աննա...

Ես քարացած մնացի դռանը։

— Թունաւորեց իրան. փչացրեց իր սիրուն կեանքը... ախ, ես ինչ կանեմ,—լալիս էր և գոռում ամուսինը։

Ներս մտայ. անկողնում պառկած էր հանգիստ ու խաղաղ դէմքով աւելի նիհարած, աւելի գունատված տիկին Աննան. նա հանգստացել էր իր հոգեկան և ֆիզիքական տանջանքներից։

— Ինչու արեց... ախ ինչու արեց այդ, ոչ ոք չէ կարողանում իմանալ. ի՞նչը ստիպեց...,—շարունակ կրկնում էր ամուսինը։

— Ոչինչ չէ՞ թողել, ոչ մի գրութի՞ւն,—հարցրի ես։

— Ի՞նչպէս չէ։ Ահա մի փոքրիկ նամակ է թողել, կարդում ենք, կարդում, բայց ոչինչ չենք հասկանում...

Նա տուեց ինձ տիկնոջ ինքնաձեռագիր նամակը, որը ունէր այս բովանդակութիւնը.

«Մնաք բարև բոլորդ. ոչ ոքի չը մեղադրել իմ մահվան մէջ. ես այդպէս ցանկացայ. «Այստեղ կամ այնտեղ»—այդ էր իմ նշանաբանը. Իսկ ինձ ասում էին՝ «Եւ այստեղ, և այնտեղ»։ Եւ ես վճռեցի ոչ այստեղ և ոչ այնտեղ, այլ Աստուծոյ մօտ. հասկացողը՝ թող հասկանայ... Ձեր դժբաղդ Աննա»։

Կարդացի նամակը և նա մեքենայաբար վայր ընկաւ ձեռիցս։ Շրջապատողները ինձ էին նայում շուարած...

Ոչ ոք ոչինչ չէր հասկանում նամակից. ես էի միայն, որ գիտէի ամեն բան և հասկանում էի նամակի իսկական միտքը...

— Ափսոս, ափսոս Աննա,—ասացի ես, բարձրացրի նամակը, տուեցի ամուսնուն և գնացի հանգստեան աղօթք կարդալու Աննայի անշնչացած դիակի վրա...

Ս. ք. Ասլանեանց

Աստրախան

---

*) Տես «Մշակ» № 75.

◆ Որպէս զի բօլգարների արշաւանքը դէպի Կ. Պօլիս կարելի լինի խափանել, Գերմանիան և Աւստրիան առաջարկեցին միջազգային զօրք իջեցնել Կ. Պօլսում: Թէև Ֆրանսիան այդ միջոցը աւելորդ է գտնում, եթէ դաշնակիցների պատերազմական տուգանքը վճարվի. բայց հաւանօրէն միջազգային բարդութիւններից խուսափելու համար մեծ պետութիւնները կը զիջեն Գերմանիայի և Աւստրիայի առաջարկին: Այդ «ծառայութեան» համար Գերմանիան խոշոր հօնօրար է ստանալու Թիւրքիայից:

◆ Վիէննայից հեռագրում են «Н. В.»-ին. «Բ. Դուռը չափազանց յուզիչ տեղեկութիւններ է ստացել Դամասկոսի գեն.-նահանգապետից, որ տեղեկացնում է, թէ շնորհիւ Աբդուլ-Համիդի նախկին երկրորդ քարտուղար տիրահռչակ արաբ Իզզէթ-փաշայի կատաղի պրօպագանդայի, Թիւրքական իշխանութեան դրութիւնը դառնում է կրիտիքական: Իզզէթ-փաշան քարոզում է Սիրիայի անկախութիւն Անգլիայի հովանաւորութեան ներքոյ»:

◆ Կ. Պօլսից Փոքր Ասիա են ուղարկվում Թիւրքական շոգենաւերով ռազմամթերքներ մեծ քանակութեամբ:

◆ Կ. Պօլսում մահմեդական հոգեւորականութեան մէջ ընդարձակ չափով պրօպագանդա է մղվում ընդդէմ «Մ. և Ա.» կօմիտէտի:

◆ Կ. Պօլսում բանտերը լցվել են. բանտարկեալների մեծ մասը կազմում են զինուորական լիգայի օֆիցերները: Բ. Դրան կարգադրութեամբ աւելի վտանգաւոր օֆիցերներին աքսորում են Անատօլիա:

◆ Ռուսաց դիպլօմատիան վաւերացնում է, որ բալկանեան դաշնակիցների միջև սկսվել են երկպառակութիւններ: Սերբիան և Յունաստանը միացած՝ գործում են Բօլգարիայի դէմ:

◆ Մակեդօնիայի շրջանների բօլգար ազգաբնակութիւնը ենթարկվում է սերբերի բռնութիւններին: Բօլգար հասարակական կարծիքը կառավարութիւնից պահանջում է վճռական միջոցներ:

◆ Թիւրքիան Պարսից Ծոցը ճանաչեց անգլիական, փոխարէնը ստանալով աջակցութեան խոստում:

◆ Մեծ պետութիւնների դեսպանները խորհուրդ տուեին Բ. Դրան համաձայնել պատերազմական տուգանքը տալու պահանջին:

◆ Կ. Պօլսում երկիւղ են կրում երկրորդ յեղափոխութիւնից հաշտութիւն կապելուց յետոյ:

◆ «День»-ը հաղորդում է, որ ռուսաց նախկին դեսպան Չարիկօվը համարվում է արտաքին գործերի մինիստրի պաշտօնի հաւանական թեկնածու:

◆ Կ. Պօլսի ռուսաց նախկին դեսպան Չարիկօվը մեկնում է Բալկան, բալկանեան դաշնակցութիւնը ամրապնդելու նպատակով:

◆ Պետերբուրգում պատմական ընկերութեան մէջ գնդապետ Վակդամը զեկուցում կարդաց, թէ եւրոպական պատերազմը անխուսափելի է իբրև պատմական անհրաժեշտութիւն և ոչ մի ջանք ու դիւանագէտների խաղեր չեն կարող այն խափանել:

◆ Ծարբինում տեղեկութիւն է ընտացվել, որ շուտով Մուկդէնում յայտարարվելու է պատերազմական դրութիւն:

◆ Բրիւսէլի հսկայ գործադուլից ամեն օր կորչում է աշխատավարձ 3 միլիոն ֆրանկ, իսկ հանքատէրերի կրած վնասը հաւասարվում է ամեն օր 22 միլիոնի:

◆ Ֆրանսիայում բօյկօտ է պատրաստվում ռուսական նաւթի դէմ:

◆ Պետական Դումայի վրա անցեալ տարի ծախսվել է ընդամենը 2.600,000 րուբլի:

◆ Պետական Խորհրդի մասնաժողովը 20 միլիօն րուբլի յատկացրեց արբեցողութեան դէմ կռուելու համար:

◆ Մամուլի օրէնագիծը Պետական Դումային կը ներկայացվի Թօմինի շաբաթում:

◆ Չերնօգօրական զօրքերը սերբերի աջակցութեամբ վերսկսեցին Սկիւտարի ռմբակոծութիւնը:

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական Զօլօտարեվը քննութիւնից յետոյ զեկուցեց, որ սլաւօնական ցոյցերի ժամանակ Պետերբուրգի ոստիկանութիւնը վարվել է միանգամայն կանօնաւոր կերպով:

◆ Պետական Դումայի նախկին անդամ, այժմ փոխ-նահանգապետ Գօլօբօվի մեղադրանքով գերագոյն բարձր դատարանը դատելու է Դումայի պատգամաւոր սօց.-դեմօկրատ Կուզնեցօվին այս ապրիլի վերջերին:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

5 ապրիլի

ԿԻԵՎ: Ժիտնի շուկայում Կօգանի ալիւրի խանութը ներս խուժեցին երկու կողոպտիչներ և վիրաւորեցին խանութի տիրոջը, նրա երկու որդոց, գործակատարին և փողոցով այդ պահին պատահմամբ անցնող դրամատարին: Հետապնդման ժամանակ ոստիկանները գնդակահարեցին մէկին, իսկ միւսը վիրաւորեց ինքը իրան ատրճանակով:

ՆՈՒԱԶԻ-ԼԸ-ՍԷԿ (Ֆրանսիա): Վիլսէրի մօտերը պայթեց մի օդապարիկ, որի մէջ նստած հինգ մարդուց չորսը մահացան:

ՀՌՕՄ: Երեկոյեան պապի տաքութիւնն էր 36,8. ջերմը վերջացաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նահանգական դատարանը «Р. Знамя»-ի խմբագիր Դուբրօվինին և աշխատակից Կլիւեվին դատապարտեց 150 ր. տուգանքի, պակասեցնելով պատիժը մի երրորդով համաձայն մանիֆէստի:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ջրի դեղատոմս, որը շատ գնահատելի է:

Մի տիկին գրում է.—Ես պէտք է հաստատեմ այն ամենը, ինչ որ լսել եմ այդ մասին: Եթէ դուք ևս ինձ պէս տառապէիք նէվրալգիայով և նէֆրիտով, անպայման շնորհակալ կը լինէիք մատնանշված դեղատոմսի համար: Ես կարդել եմ լրագիրներից այդ դեղատոմսը, և հէնց որ ընդունել եմ այդ դեղը, իսկոյն և եթ թեթեւութիւն եմ զգացել իմ քրօնիկական տանջանքներից: Դեղատոմսը կարելի է ստանալ ցանկացած դեղատանը և դեղավաճառանոցում: Խնդրեցէք 60 գրան Կէֆալդօլ-Ստօր՝ տաբլէտկաներում: Առաջին երկու տաբլէտկաները ընդունելուց անմիջապէս թեթեւութիւն էք զգում. դրանից յետոյ իւրաքանչիւր ժամը մի անգամ պէտք է ընդունել մի տաբլէտկա, մինչև որ ցաւերը վերջնականապէս դադարեն, լինեն այդ ցաւերը ջղային թէ յօդային: Ցիշեալ դեղը բոլորովին անվնասակար է, իսկ ներգործութիւնն էլ ապահովված:

(П. 51751) (№ 3)

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՌՕՏԻՆԵԱՆ ՏԻԿ. «Գործնական խոհարարական դասագիրք»	75 կ.
ԱՀԱՐՈՆԵԱՆ Ա. «Շվէյցարական գիւղը», նամականի	1 ր. »
ԱԹԱԲԷԿԵԱՆ Լ. «Բանաստեղծութիւններ»	50 կ.
ՎԱՀՈՒՆԻ «Մատնիչ» պատմուածք	40 կ.
ՇՆԻՑԼԷՐ ԱՐՏՈՒՐ «Երկերի ժողովածու» հատ. I.	1 ր. »
ԱԲԷԼԵԱՆ Ա. «Անկոչ հիւր 1 գ.	25 կ.
» «Պօէտի երազը» 1 գ.	20 կ.
ՍԵՆԿԵՎԻՉ Հ. «Առանց դաւանանքի»	1 ր. 50 կ.
ՏՕԼՍՏՕՅ «Յարութիւն»	1 ր. 50 կ.
ԲԱԲԵԱՆ «Տնային բժշկարան» I և II հատ.	2 ր. 60 կ.

Միևնոյն գրատանը վաճառվում են հրապարակում լոյս տեսած հայերէն և օտար լեզուներով նոր դասագրքեր: Վաճառվում են նաև՝ քարտէզներ, համրիչներ, գլօբուսներ և այլն:

Պատուէրները կատարվում են արագ:

Դիմել՝ Тифлисъ, Центральной Книжной Торговлѣ. 270. 1–1

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ
„ԵՐԿՈՒ ԵՐԳ"
Opus II.
№ 1 Ուռենի (դուէտ և դաշն) 40 կ.
№ 2 Անջատում (սօլօ և դաշն 40 կ.
Պահեստը՝ Тифлисъ. Муз. магазинъ Сузанаджіана.

(Կ.) 263. 3—1

600 ԱՌԱՐԿԱՆԵՐ
Փոխանակ 25 րուբլու
2 ՌՈՒԲԼԻ 90 կոպ.

Մեր ֆիրմայի հետ ծանօթանալու համար մենք ուղարկենք միայն այս լրագրի ընթերցողներին 600 հատ օգտ. և արժէք. առարկ., որոնցից գլխաւորն է՝ գրպ. անկէր, ժամաց. 10 տ. երաշխիքով, ոսկէ դուբլէ-շղթայ, ադամ. և կան. ոսկէ դուբլէ մատանիներ ամերիկ. ադամանդով. նոյն յատկութ. ապարանջան, մանեակ և ականջօղեր (200 ր. արժէք ունեցողից չը զանազանվող), կաշուէ դեղ. պորտմօնէ, նէսէսէր և 500-ից աւելի հետաքրք. և օգտ. առարկ.: Բոլոր 600 առարկ. համար վերցնում ենք միայն 2 ր. 90 կ. (ժամաց. առանձին արժէ 6 ր.): Վերադիր վճ. ուղարկ. համար ճանապարհածախք հաշւվում է՝ 1—3 գարն. համար 55 կ., Սիբիր՝ 95 կ.: Չը հաւանած դէպքում յետ ենք վերցնում և փողը վերադարձնում: О-во „МЕРКУРІЙ", ЛОДЗЬ. № 24.

(Կ.) (Л. 3594) 6-6

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների: Էլեկտրաբուժութիւն:

Ընդունելութիւնը ամեն օր (12½—2 ժ. ցերեկվայ:
(5—7 ժ. երեկոյեան:
(Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէյբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչ փողոցի): Տէլէֆօն № 1175.

(Հ. Կ.) 377. 100—83



ԱՇԽԱՐՀԱԾԱՆՕԹ
ԿՐԷՄ ԿԱԶԻՄԻ
ՄԵՏԱՄՕՐՖՕԶԱ

Միակ ճանաչվածը ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ կանանց կողմից:
Անպայման արմատապէս հեռացնում է երեսի բծիկները, բշտիկները, մուները, այրուածքները, կնճիռները և այլ դէֆէկտները:

(7,21) (Вил. 15762) 3—2

Ոսկէ մեդալ Լոնդոն 1893 թ.

Զգուշացէք կեղծիքներից!
ՊՐՕՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրնօ-Տիմօլեան Սապօն

Քրտինքի, այրուածքի, պէպէնների, ուգրիների, պզուկների և դեղին խալերի դէմ:
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ:
Վաճառվում է ամենուրեք:
1 կտորը 50 կոպէկ, ½ կտորը 30 կոպէկ:

Գլխաւոր պահեստ՝ Москва, Г. Ф. Юргенсъ.

(Կ.) (M. 50331) 24—5

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱՆ

ընդունում է ցինկօգրաֆիական ԿԼԻՇԷՆԵՐԻ պատուէրներ և պատրաստում է ճշգրութեամբ, մաքուր և մատչելի գներով:
Большая-Ванкская ул. № 12.

(Հ. Կ.) 222. 8—4

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ"
Только МИХАЙЛА ЛЕБЕДЕВА
Съ надписью „Этикетъ утвержденъ правит.".
Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.
Главный складъ: Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.

(Կ.) 177. 0—4

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ ռեցեպտներով, խորհուրդներով և նկարներով: Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ: Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի: Գինն է 50 կ.:
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» ռեցեպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով: Գինն է 20 կ.:
3) «Ներկարմասի սավարը կամ մօղնի իւրկէն», խիստ ծիծաղաշարժ վօդեվիլ միմիայն չափահասների համար: Գինը 20 կ.:
4) «Սօնայի նշանդրէքը» յայտնի վօդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն: Գինը 15 կ.
5) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից. գիւղերի նկարներով: Գինը 7 կ.:
6) «Ռուսական զօրք եւ միլիցիա» Պիմէնօվից թարգմանած: Գինը 5 կ.:

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին: Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախքը՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Անպայման՝ զակազնոյ): Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(Հ. Կ.) 44. 100—24

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ և ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ
ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԻՍ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԸ բարեհաճել է թոյլատրել ինձ բանալ Բագւ քաղաքում հայկական ձայնագրութեան և հոգեւոր երգեցողութեան դպրոց իմ ներկայացրած ծրագրի համաձայն: ՆՊԱՏԱԿ. 1) Ուսուցանել հայկական ձայնագրութեան արուեստը և ամբողջ մեր Ութ ձայն շարականները և հոգեւոր երգեցողութիւնը: 2) Մ. Եկմալեանի ներդաշնակած քառաձայն պատարագի երգեցողութիւնը: 3) Կազմել երկսեռ քառաձայն երգեցիկ խումբ և նախապատրաստել հմուտ և կարող երկսեռ խմբապետներ գաւառական հայոց եկեղեցիների և դպրոցների համար: Լիակատար տեղեկութիւնների համար գաւառներից պէտք է դիմել ինձ, պօստային 2 հատ 7 կոպ. մարկայով այսպէս՝ Балаханы-Забратъ, д. Муса-бека, № 131, священнику Казаросу Овсепьянъ

ու.կ. 257. 3—3

Мраморно-мозаичное заведеніе
Б. Вилла и А. Рицци
Михайловскій пр. № 42. Телефонъ № 620.
ИМѢЮТСЯ всегда въ большомъ выборѣ готовыхъ ПАМЯТНИКОВЪ изъ разнаго порода МРАМОРА и ГРАНИТА.
Принимаются всевозможныя МОЗАИЧНЫЯ работы и ОБЛИЦОВКИ ФАСАДОВЪ ЕСТЕСТВЕННЫМЪ и ИСКУССТВЕННЫМЪ КАМНЕМЪ.

(Հ. Կ.) 171. 12—10

Լոյս տեսաւ տիկին Վ. ՌՕՏԻՆԵԱՆԻ
„Գործնական խոհարարական դասագիրքը"
Բ. տպագրութեամբ, ճոխացրած և բարեփոխված:
Գինն է 75 կոպ., ճանապարհածախսով 90 կոպ.
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին: Պահեստը «ԳԻՐ» գրախանութում:

(Ե.Կ.) 248. 3—3

ՁԵՐ ԼԵԶՈՒՆ ՍՊԻՏԱԿԱԾ Է?

Եթէ այս—ուրեմն դա անվիճելի ապացոյց է, որ Ձեր ստամոքսը և աղիքները անկանոն են գործում: Դա առաջ է գալիս կամ անկանոն մարսողութիւնից և կամ թէ կապութիւնից, և շատ կարելի է՝ այդ երկու ախտից: Թէ մէկ և թէ միւս դէպքում Սկավոլինը, իբրև լուծողական միջոց առանց հոտի և համի, տալիս է ամենալաւ հետեւանքներ—թէ լաւ մարսումն և թէ ստամոքսի կանոնաւոր գործունէութիւն:

Վաճառվում է բոլոր դեղատներում:
ՍԿԱՎՈԼԻՆ: (B. 22396)

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Է
Հայերէն հրատարակութիւնների ցուցահանդէս

որ պէտք է բացվի Թիֆլիսում 1913 թ. հոկտ. 6-ին և տեւելու է մինչև նոյն ամսի 12-ը:

Ուստի խորհուրդը խնդրում է պ. պ. հեղինակներին, հրատարակիչներին, տպարանատէրերին և ամեն մի հայի՝ ուղարկել Ընկերութեանս հայերէն ամեն տեսակ հրատարակութիւններ, հայկական վիմատիպ պատկերներ և քարտէզներ:

Այն հրատարակութիւնները, որ կը նուիրվեն Ընկերութեանս և կամ դրամով ձեռք կը բերվեն, ցուցահանդէսից յետոյ պիտի պահվեն Ազգագրական Ընկ. մատենադարանում, որ այդպիսով դառնալու է մի մնայուն յուշարձան հայ գրերի և տպագրութեան, իսկ սոսկ ցուցադրվելու նպատակով ստացվածները կը վերադարձվեն տէրերին:

Ամեն ինչ պէտք է ուղարկել այս հասցէով. Армянскому Этнографическому Обществу. Тифлисъ.

Խորհրդի նախագահ՝ Ս. Մելիք-Ազարեանց
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեանց

(Կ.) 65. 10—5

Գ. ԳՕՐՆԻԳ
Գոլովինեան պր. 11, զինուորա-պատմական թանգարանի մօտ:

Г. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
СУЩ. съ 1873 г.
СПЕЦ.: ОКУЛИСТ. ОПТИКА. ЕДИНСТ. НА КАВКАЗѢ ШЛИФОВАЛЬНЯ ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛЪ
БИНОКЛИ ДЛЯ ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ ВСѢХЪ ЛУЧШИХЪ СИСТЕМЪ И ФАБРИКЪ.
Головинск. пр. 11 около Военно-Ист. Музея.

[illegible]

Հ. Կ. 38. 10—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорис-Меликовская улица, домъ казенный